ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/88

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև բողոքներ քննող անձը) քննելով «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի կողմից 09.07.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **<u>«ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 09.07.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից սահմանված կարգով հայտարարված գնումների բաց մրցույթին մասնակցելով, «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից), Պատվիրատուի կողմից թիվ 7, 9, 10, 12, 13, 18, 26 չափաբաժինների (այսուհետ՝ Չափաբաժիններ) գծով զբաղեցրել է առաջին տեղը:

Դա հաստատվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքին (այսուհետ՝ Օրենք) համապատասխան ստեղծված Գնահատող Հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի հունիսի 25-ի թիվ 3 արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) «Տվյալներ

առաջին եւ հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ» 6-րդ բաժնի տվյալներով:

Չնայած Մասնակցի կողմից չափաբաժինների մասով բաց մրցույթում առաջին տեղն զբաղեցնելու իրողությանը, Արձանագրության «Տեղեկություններ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների ՀՀ պետբյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային պարտավորությունների առկայության մասին» 7-րդ բաժնում Հանձնաժողովը նշել է, որ որոշում է ընդունել Մասնակցի հայտը մերժելու մասին, ինչպես նաև Մասնակցին առաջարկություն է արել «շտկել առկա անհամապատասխանությունները»:

Չափաբաժինների մասով Մասնակցի հայտը մերժելու մասին որոշումը կայանցնելու հիմքում Հանձնաժողովը դրել է Օրենքի հիման վրա ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 44-րդ կետը:

Թեև այդ կետով որևէ մասնակցի հայտը մերժելու հիմքում մի քանի պայմաններ են նախատեսված, սակայն Արձանագրության մեջ նշված չէ, թե կոնկրետ որ հիմքով է հայտը մերժվում, բայց նկատի ունենալով այն հանգամանքը, որ Արձանագրության վերը նշված 6-րդ բաժինը վերաբերում է հայտը ներկայացնելու դրությամբ պետբյուջեի նկատմամբ պարտքին, ուստի գտնում եմ, որ այդ հիմքով է մերժվել Մասնակցի հայտը:

Այդ կապակցությամբ տեղեկացնում եմ հետևյալի մասին:

Մասնակիցը հայտը ներկայացրել է դրա համար Պատվիատուի կողմից սահմանված վերջին օրը՝ 2018 թվականի մայիսի 28-ին, որը ոչ աշխատանքային, տոնական օր է եղել:

Իրականում Մասնակիցն ունեցել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված 50 հազար դրամը գերազանցող հարկային պարտավորություն, այն է՝ ընդհանուր առմամաբ 1,280,848 ՀՀ դրամի պարտավորություն, որը կազմել է եկամտային հարկի և սոցիալական վճարի ապառքների ու դրանց նկատմամբ հաշվարկված տույժերի ընդհանուր գումարը:

Սակայն, Մասնակիցը այդ պարտքը մարելու համար գանձապետարանի համապատասխան հաշվեհամարին 1,300,000 դրամ է փոխանցել 2018 թվականի մայիսի 25-ին, որը հաստատվում է «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ-ի «Զվարթնոց» մասնաճյուղի կողմից տրված 2018 թվականի մայիսի 25-ի թիվ 180525090038006 վճարման հանձնարարականով (այսուհետ՝ Վճարման հանձնարական): Վերջինս մրցույթին է ներկայացվել հայտի հետ նույն օրը՝ 2018 թվականի մայիսի 28-ին, էլեկտրոնային եղանակով, որը սահմանված է եղել մրցույթի կանոններով:

ՀՀ հարկային օրենսգրքի 18-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված է, որ հարկի (այդ թվում՝ կանխավճարի), տույժի եւ (կամ) տուգանքի վճարումը համարվում է կատարված վճարողին սպասարկող բանկի վճարման հանձնարարականի հիման վրա Հայաստանի Հանրապետության կետրոնական բանկի կողմից միասնական գանձապետական հաշվին գումարի հաշվեգրման օրը:

Մայիսի 25-ի Վճարման հանձնարարագրի հիման վրա հարկային պարտքի գումարը՝ 1,300,000 ՀՀ դրամի չափով, գանձապետարանի հաշվին մուտքագրվել է 2018 թվականի մայիսի 29-ին, կամ 2018 թվականի ոչ աշխատանքային օրվան հարջորդող առաջին իսկ աշխատանքային օրը:

Այսպիսով՝ հարկային պարտավորության գումարը պետական բյուջի համապատասխան հաշվեհամարին է մուծվել 2018 թվականի մայիսի 25-ին: Սակայն, քանի որ այդ օրվան հաջորդող 2018 թվականի 26-ը և 27-ը եղել են հանգստյան օրեր՝ շաբաթ և կիրակի, իսկ մայիսի 28-ը՝ տոնական ու դարձյալ ոչ աշխատանքային օր, այդ իսկ պատճառով գանձապետարանի համապատասխան հաշվին մուտք է արվել դրանց հաջորդող առաջին աշխատանաքային օրը՝ 2018 թվականի մայիսի 29-ի երկուշաբթի:

Վերոշարադրյալից հետևում է, որ առնչվում ենք երկու փաստի հետ.

1)մասնակիցը հարկային պարտավորության գումարը համապատասխան գանձապետական հաշվին փոխանցել է հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք օր առաջ՝ 2018 թվականի մայիսի 25-ին,

2)հարկային պարտավորության գումարը գանձապետարանի համապատասխան հաշվին հաշվեգրվել է Մասնակցի կողմից հայտը ներկայացնելու օրվան հաջորդող առաջին օրը՝ 2018 թվականի մայիսի 29-ին:

Դրանից հետևում է, որ եթե 2018 թվականի մայիսի 26-ը կամ 27-ը լինեին աշխատանքային օրեր, ապա հարկային պարտավորության գումարը գանձապետարանի համապապատասխան հաշվին կհաշվեգրվեր Մասնակցի կողմից հայտը ներկայացնելու օրվանից առաջ: Սակայն դա տեղի չի ունեցել զուտ այն պատճառով, որ 2018 թվականի մայիսի 26-28-ը հանդիսացել են ոչ աշխատանքային օրեր, երբ բանկերը չեն աշխատում:

Այդ հանգամանքները հաշվի առելու դեպքում, գտնում եմ, որ Մասնակիցի հայտի ընդունումը չպետք է մերժվեր:

Այդ հետևությունը հիմնվում է հետևյալի վրա:

«Վճարման հանձնարարագրերով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված է՝

«1. Ստացող բանկը (բացի շահառուի բանկից) վճարման հանձնարարականն ակցեպտավորում է, երբ կատարում է վճարման հանձնարարականը, բացառությամբ նույն հոդվածի 4 կետով նախատեսված դեպքերի:

2. Բացառությամբ նույն հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված դեպքերի, վճարման հանձնարարականը շահառուի բանկի կողմից ակցեպտավորված է համարվում՝

ա) երբ բանկը վճարում է շահառուին կամ նրան տեղեկացնում է ուղարկում (բանավոր, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով) վճարման հանձնարարականի ստացման կամ վճարման հանձնարարականի ստացման կապակցությամբ շահառուի հաշիվը կրեդիտագրելու մասին, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ տեղեկացման մեջ նշված է, որ շահառուն չի կարող տնօրինել ստացված միջոցները մինչև ուղարկողի կողմից վճարման հանձնարարականի գումարը վճարելը, կամ որ բանկը մերժում է վճարման հանձնարարականը (հոդված 16).

բ) երբ ուղարկողը վճարում է շահառուի բանկին վճարման հանձնարարականի գումարը, կամ

գ) վճարման հանձնարարականում նշված վճարման օրվան հաջորդող՝ շահառուի բանկի գործառնական օրվա սկզբին, եթե այդ պահին ուղարկողը վճարել է բանկին վճարման հանձնարարականի գումարը, կամ ուղարկողի՝ տվյալ բանկում գտնվող հաշվի մնացորդը բավարար է վճարման հանձնարարականի գումարը հատուցելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ վճարման հանձնարարականը մերժվել է մինչև տվյալ գործառնական օրվա սկիզբը, կամ՝

- շահառուի բանկի գործառնական օրվա սկզբից մեկ ժամվա ընթացքում, կամ

- վճարման հանձնարարականում նշված վճարման օրվան հաջորդող՝ ուղարկողի գործառնական (աշխատանքային) օրվա սկզբից մեկ ժամվա ընթացքում, եթե ուղարկողի գործառնական (աշխատանքային) օրը սկսվում է ավելի ուշ, քան ստացող բանկի գործառնական օրը»:

Օրենքի վերոնշյալ դրույթներից ուղղակիորեն հետևում է, որ վճարման հանձնարարականներով բանկային գործառնությունները իրականացվում են գործառնական, այն է՝ աշխատանքային օրերի ընթացքում: Դրա հիման վրա էլ գանձապետարանի համապատասխան հաշվեհամարին Մասնակիցի հարկային պարտավորության գումարի ակցեպտավորումը համապատասխան սպասարկող բանկը ակցեպտավորել է գործառնական, այն է՝ աշխատանքային օրը՝ 2018 թվականի մայիսի 29-ին:

Մասնակիցը հարկային պարտավորություններ ունենալու մասին տեղեկացել է միայն 2018 թվականի մայիսի 25-ին, և հենց նույն օրն էլ Վճարման հանձնարարագրով 1,300,000 դրամը փոխանցել է գանձապետարանի համապատասխան հաշվեհամարին: Նշեմ, որ Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է նաև հարկային պարտավորության գումարը մի քանի անգամ գերազանցող, այն է՝ 19,501,202 դրամի չափով գերավճար, որը հաստատվում է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված՝ Մասնակցի վերաբերյալ 2018 թվականի մայիսի 28-ի դրությամբ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքով:

Վերոնշյալ փաստական և իրավական հանգամանքների հաշվառմամբ մետենալով Պատվիրատուի հայտարարած գնումների բաց մրցույթի արդյունքների գնահատմանը, գտնում եմ, որ չափաքանակրների մասով առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի հայտը չպետք է մերժվեր, մանավանդ եթե նկատի ունենանք այն փաստը, որ հարկային պարտավորության մարումը նրա կողմից փաստացի կատարվել է դեռևս 2018 թվականի մայիսի 25-ին, և զուտ այն փաստը, որ դա գանձապետարանի համապատասխան հաշվին հաշվեգրվել է միայն մայիսի 29-ին, չպետք ձևական պատճառ հանդիսանա Պատվիրատուի հայտարարած մրցույթին պատշաճ կերպով մասնակցած Մասնակցի հաղթողի իրավունքը չեզոքացվելու համար:

Տեղեկացնեմ, որ 2018 թվականի հունիսի 13-ին եզրակացություն ներկայացնելով Հանձնաժողովին Մասնակիցի կողմից հայտ ներկայացնելու օրվա դրությամբ հարկային պարտավորությունների առկայության մասին, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն չի նշել, որ այդ պարտքը 2018 թվականի մայիսի 29-ի դրությամբ արդեն հաշվեգրվել է գանձապետարանի համապատասխան հաշվին, ուստի և մրցույթին մասնակցելու հայտ ներկայացնելու վերջին օրվան՝ մայիսի 28-ին հաջորդող առաջին աշխատանքիայնի օրը, այն է՝ 2018 թվականի մայիսի 29-ին, պարտքը մարված է եղել, որը, իմ կարծիքով, պետք է հաշվի առներ Հանձնաժողովը և Չափաբաժինների մասով առաջին տեղն զբաղեցրած Մասնակցի հայտը մերժելու մասին որոշում չկայացվեր:

Անհրաժեշտ եմ համարում նշել նաև Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի այն դրույթը, ըստ որի գնումների ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող երակումնտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ: Նման դրույթ նախատեսված է նաև Պատվիրատուի

«Հայտարարություն բաց մրցույթի մասին» փաստաթղթի 2-րդ բաժնի 2.1 կետի 2-րդ ենթակետով:

Օրենքի և նշված Հայտարարության հիշյալ դրույթներից հետեւում է, որ Մասնակիցը չպիտի թույլատրվեր մասնակցելու Պատվիրատուի կողմից հայտարարված գնումների բաց մրցույթին:

Մինչդեռ թույլատրվել է, որը Մասնակից կողմի կարծիքով արվել է այն բանի հաշվառումով և իրավաչափորեն, որ Հանձնաժողովը հնարավոր է համարել, որ մրցույթի սկզբում պարզվի այն փաստը, որ Մասնակիցը ժամկետանց հարկային պարտավորությունը այնուամենայնիվ մարել է, այն էլ այնպիսի պայմաններում, որոնց մասին վերն արդեն հիշատակվել է, և որ այդպիսի պայմաններում Մասնակցի հայտը մերժելու մասին որոշում չէր կայացվի:

Ուշադրություն եմ հրավիրում նաև հետևյալ հանգամանքի վրա:

Ինչպես վերն արդեն նշվել է, որ Արձանագրության 7-րդ բաժնում Մասնակցին առաջարկվել է «շտկել առկա անհամապատասխանությունը»: Այդ առաջարկությունը անելիս Հանձնաժողովը հիմնվել է Կարգի 45-րդ կետի վրա: Իսկ այդ կետը հղում է անում Օրենքի վերն արդեն հիշատակված 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերի ի հայտ գալու դեպքում, որոնց մեջ մտնում է նաև պետբյուջեի հանդեպ մասնակցի ժամկետանց պարտավորություն ունենալը, Պատվիրատուի կողմից տվյալ մասնակցին վերաբերող փաստաթղթերը գրավոր լիազորված մարմին ուղարկելու և վերջինիս կողմից դրանք գնումների բողոքարկման խորհրդին տրամադրելու մասին:

Բացի դա, Կարգի նույն 45-րդ կետի հաջորդ նախադասությամբ սահմանված է հետևյալը. «Սույն կարգի 44-րդ կետով սահմանված մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում»:

Կարգի վերը նշված դրույթից ուղղակիորեն հետևում է, որ Արձանագրությունը կազմելու պահի դրությամբ Հանձնաժողովի տրամադրության տակ եղած փաստաթղթերով արդեն

հաստատված է եղել, որ Մասնակցի ժամկետանց հարկային պարտավորությունները գանձապետարանի համապատասխան հաշվին արդեն հաշվեգրված է եղել մայիսի 29-ին, հետևաբար դրանից ելնելով գտնում եմ, որ Մասնակցի հայտը պիտի չմերժվեր:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված են բողոքը ներկայացնելու ժամկետները, սակայն դրանք վերաբերում են պայմանագիրը կնքելու որոշման դեմ բերված բողոքներին ու գնման առարկայի բնութագրերին և նախավորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջներին:

Գնահատման հանձնաժողովի որոշումները, տվյալ դեպքում՝ Արձանագրության 7-րդ բաժնում նշված՝ Մասնակցի հայտը մերժելու մասին որոշումը բողոքարկելու համար ինչպես Օրենքը, այնպես էլ Կարգը ժամկետներ չեն սահմանել:

Մինչդեռ Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու նաև գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Եթե ղեկավարվելու լինենք Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված՝ պայմանագիր կնքելու որոշումը բողոքարկելու համար սահմանված ժամկետին, ապա եթե սույն բողոքը ներկայացնելու համար ժամկետի սկիզբ համարենք Արձանագրություն կազմելու տարեթվին հաջորդող օրը, այն է՝ 2018 թվականի հունիսի 25-ին հաջորդող՝ հունիսի 26-ը, ապա դրանից հետո 10 աշխատանքային օրը լրանում է 2018 թվականի հուլիսի 10-ին, երբ մինչև այդ օրը ներառյալ կարող է բողոք բերվել:

Ուստի գտնում եմ, որ սույն բողոքը ներկայացվում է այնպիսի ժամկետում, որը չի խախտում Օրենքի 6-րդ բաժնով սահմանված որևէ դրույթ:

Բողոքը ներկայացնելով, նկատի ենք առնում Օրենքի 51-րդ հոդվածի դրույթն այն մասին, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքն ինքնաբերաբաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածին 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով որոշման ուժի մեջ մտնելու օրը:

Ելնելով վերոնշյալ փաստական եւ իրավական հանգամանքերից, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ Օրենքի 6-րդ բաժնի դրույթներին համապատասխան քննության առնել սույն բողոքը եւ վերացնել Արձանագրության «Տեղեկություններ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների ՀՀ պետբյուջեի նկատմամբ հայտ ներկայացնելու օրվա դրությամբ հարկային պարտավորությունների առկայության մասին» 7-րդ բաժնի՝ «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը, առկա

անհամապատասխանությունը շտկելու մասին առաջարկությունը և Գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել ընդունելու որոշում թիվ 7, 9, 10, 12, 13, 18, 26 չափաբաժիններով բաց մրցույթում «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի առաջին տեղ զբաղեցնելու մասին:

Եթե Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավասու չէ վերացնել Մասնակցի հայտը մերժելու և անհամապատասխանությունները շտկելու մասին նրան տրված առաջարկությունը, ապա խնդրում ենք պարտավորեցնել Գնահատման հանձնաժողովին ընդունել որոշում թիվ 7, 9, 10, 12, 13, 18, 26 չափաբաժիններով բաց մրցույթում «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի առաջին տեղ զբաղեցնելու մասին»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ փաստաբան Վարդան Խեչյանը:

2. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի կողմից 09.07.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 13.07.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ մասի՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից կատարվել է հարցում ՀՀ ՊԵԿ: ՀՀ ՊԵԿ-ից ս.թ հունիսի 6-ին ստացված եզրակացության մեջ արձանագրված է, որ «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ՝ 1.280.848 ՀՀ դրամի չափով:

Առաջնորդվելով Կարգի 44-րդ կետով գնահատող հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվել է և Կարգի 47-րդ կետի համաձայն՝ «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ին առաջարկ է ներկայացվել շտկել առկա անհամապատասխանությունը, որին ի պատասխան «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ն ներկայացրել է վճարման հանձնարարական թիվ 180525090038006, որտեղ երևում է որ «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ն ս.թ. մայիսի 25-ին կատարել է վճարում 1,300,000 ՀՀ դրամի չափով և ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկանք:

Հաշվի առնելով ներկայացված հիմնավորումները «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի տվյալները չեն ներկայացվել ՀՀ Ֆինանսների նախարարություն գնումների մասնակցության իրավունք չունեցող ընկերությունների ցուցակում ներառելու նպատակով, սակայն ի կատարումն Կարգի 44-րդ կետի՝ «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի հետագա մասնակցությունը գնման ընթացակարգին դադարեցվել է:»:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր լիազորված ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/88 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի կողմից 09.07.2018թ. բերկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 25.06.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 13.07.2018թ. գրությամբ հայտնած դիրքորոշումը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար պաշտպանիչ միջոցների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) 28.05.2018թ. ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ն:

«ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովի 25.06.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա

«ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի 7, 9, 10, 12, 13, 18 և 26 չափաբաժինների մասով:

Նույն արձանագրության 7-րդ կետով արձանագրվել է, որ 13.06.2018թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից եզրակացության համաձայն՝ «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 1,280,848 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Արձանագրության նույն կետով Հանձնաժողովը որոշել է «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ միաժամանակ առաջարկելով վերջինիս շտկել հայտում առկա անհամապատասխանությունը:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտնեց, որ Ընկերության կողմից հայտը ներկայացվել է 28.05.2018թ., որը եղել է ոչ աշխատանքային, տոնական օր: Վերջինս ընդունեց, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է Օրենքով սահմանված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն՝ եկամտային հարկի և սոցիալական վճարի ապառքների ու դրանց նկատմամբ հաշվարկված տույժերի հանրագումարի՝ 1,280,848 ՀՀ դրամի չափով: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ վերը նշված պարտքը մարելու նպատակով՝ Ընկերությունը 25.05.2018թ. կատարել է բյուջետային փոխանցում՝ 1,300,000 ՀՀ դրամի չափով, և հայտը ներկայացնելու նույն օրը վճարման հանձնարարականը ներկայացրել է նաև Հանձնաժողովին: Սակայն, Ընկերության ուշադրությունից վրիպել էր այն փաստը, որ 25.05.2018թ.-ին հաջորդող երկու օրերը (շաբաթ և կիրակի), ինպես նաև երրորդ օրը՝ 28.05.2018թ. հանդիսացել են ոչ աշխատանքային օրեր, այդ իսկ պատճառով գումարը գանձապետարանի համապատասխան հաշվին մուտք է արվել դրանց հաջորդող առաջին աշխատանաքային օրը՝ 29.05.2018թ. (երկուշաբթի): Արդյունքում, Ընկերության միասնական հարկային հաշվին հայտը ներկայացնելու օրվա դրությամբ արտացոլվել է վերը նշված ժամկետանց հարկային պարտավորությունը: Ընկերության ներկայացուցիչը կարծիք հայտնեց, որ նշված փաստական հանգամանքների առկայության պարագայում Ընկերության հայտը մերժելու որոշման հիմքում ընկած հիմնավորումը կրում է ձևական բնույթ, և չպետք է այդ ձևական պատճառով Պատվիրատուի կողմից հայտարարած մրցույթին պատշաճ կերպով մասնակցած Ընկերության հայտը մերժվեր:

Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց.

- Ընկերության կողմից 25.05.2018թ. «Արդշինբանկ» ՓԲԸ-ի միջոցով՝ հարկային պարտավորությունների կատարման նպատակով, հարկերի միասնական հաշվին փոխանցված 1,300,000 ՀՀ դրամի չափով բյուջետային փոխանցման N180525090038006 վճարման հանձնարարականը:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 25.06.2018թ. «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ին տրված՝ «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ» թիվ 3134 տեղեկանքն առ այն, որ Ընկերությունը 29.05.2018թ. դրությամբ որևէ հարկային պարտավորոթյուն չի ունեցել, և ունեցել է 19,501,202 ՀՀ դրամի չափով դեբետային մնացորդ ԱԱՀ-ի գծով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.

- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով գնանշման հարցման հրավերի՝

• 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 8.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև նույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 8.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 8.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 18-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված է, որ հարկի (այդ թվում՝ կանխավճարի), տույժի և (կամ) տուգանքի վճարումը համարվում է կատարված վճարողին սպասարկող բանկի վճարման հանձնարարականի հիման վրա Հայաստանի Հանրապետության կետրոնական բանկի կողմից միասնական գանձապետական հաշվին գումարի հաշվեգրման օրը:

Օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորության կատարում (մարում) է համարվում Օրենսգրքին համապատասխան հաշվարկված՝ վճարման ենթակա հարկի, ինչպես նաև դրա գծով տույժերի և (կամ) տուգանքների գումարների հաշվեգրումը միասնական հաշվից համապատասխան հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 13.06.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 1,280,848 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

- Ընկերության կողմից 25.05.2018թ. «Արդշինբանկ» ՓԲԸ-ի միջոցով՝ հարկային պարտավորությունների կատարման նպատակով, հարկերի միասնական հաշվին փոխանցվել է 1,300,000 ՀՀ դրամի չափով գումար:

- Ընկերության կողմից 25.05.2018թ. կատարված վճարումն արտացոլվել է միայն 29.05.2018թ., քանի որ Ընկերությունը փոխանցումը կատարել է ժամը 14:00-ից հետո, իսկ 26.05.2018թ.-28.05.2018թ. հանդիսացել են ոչ աշխատանքային օրեր:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 25.06.2018թ. «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ -ին տրված տեղեկանքի համաձայն՝ Ընկերությունը 29.05.2018թ. դրությամբ որևէ հարկային պարտավորություն չի ունեցել:

Վերոգրյալով պայմանավորված և հաշվի առնելով, որ հայտը ներկայացնելու օրը Ընկերության կողմից կատարվել է հարկային պարտավորությունների մարմանն ուղղված վճարումը, սակայն հարկերի միասնական հաշվին հաշվեգրված միջոցներից հարկային պարտավորությունների մարումը կատարվել է միայն 29.05.2018թ., այսինքն, ավելի ուշ, քան Ընկերության կողմից վճարում կատարելը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ նշված հանգամանքներում Ընկերության ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության փաստը չպետք է դիտարկվի որպես Ընկերության կողմից հարկային պարտավորությունների անբարեխիղճ կատարման արդյունք, հետևաբար, չի կարող հիմք հանդիսանալ Ընթացակարգի շրջանակներում վերջինիս կողմից ներկայացված հայտը մերժելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի կողմից 09.07.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ ընդունել Հանձնաժողովի 25.06.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 7-րդ կետով կայացված՝ «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի հայտը մերժելու որոշումը դադարեցնելու վերաբերյալ համապատասխան որոշում:

3. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ ընդունել «ՏԵՔՍՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ին Ընթացակարգի թիվ 7, 9, 10, 12, 13, 18, 26 չափաբաժիններով առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ